

ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ -1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ

Ընթացիկ հաշվետվություն

2009թ.տարեկան ժողովի

Հասցե ք.Երևան 0023, Արշակունյաց փ, 12

Հեռախոս . 52-53-21

Ֆաքս 52-57-13

Էլփոստ Info@yerjewel.com

Ինտերնետ կայք www.yerjewel.com

Սույն թվականի մայիսի 27 -ին տեղի ունեցավ Երևանի ոսկերչական գործարան-1 «ԳՆՈՍՈՆ» ԲԲ Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը:

Ներկայացվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի կազմակերպման և վարման ժամանակ առաջացած հետևյալ փաստաթղթերը՝

1. Ընկերության տնօրենների խորհրդի 14.05.10թ. կայացած նիստի արձանագրությունը (N 4Խ-10):
2. Տարեկան ընդհանուր ժողովի արձանագրությունը (N 2Ժ-10, 27.05.10թ.):
3. Հաշվիչ հանձնաժողովի N 1, N 2 և N 3 արձանագրությունները:
4. Գլխավոր տնօրենի Ընկերության 2009թ. գործնության վերաբերյալ հաշվետվությունը:
5. 2009թ.-ի գործնության ֆինանսական վերլուծությունը:
6. Վերստուգիչ հանձնաժողովի եզրակացությունը:
7. Բաժնետերերին բաժանված հետևյալ նյութերը՝
 - ժողովի օրակարգը;
 - Ընկերության 2009թ. տարեկան հաշվետվություն;
 - Քվեաթերթիկի օրինակը:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4Խ-10

Երևանի ոսկերչական գործարան-1 «ԳՆՈՍՈՆ» ԲԲԸ տնօրենների խորհրդի
նիստի

ք.Երևան

14.05. 2010թ.

Ներկա են տնօրենների խորհրդի հետևյալ անդամները՝

Հրանտ Շիրինյան
Էմիլ Գրիգորյան
Արմեն Գրիգորյան
Սեդա Հակոբյան
Հովհաննես Եսայան
Էդուարդ Մաթևոսյան
Արկադի Տարգաշով

Խորհրդի քարտուղար՝ Ա. Ներսեսյան

Հրավիրված է՝

Վ. Խաչատրյան

Գլխավոր հաշվապահ

Կանոնադրության համաձայն խորհրդի նիստ անցկացնելու համար քվորումն
առկա է:

- ՕՐԱՎԱՐԳ՝**
1. Ընկերության 2009թ.գործնության տարեկան հաշվետվություն:
 2. Ընկերության 2009թ. տարեկան ֆինանսական հաշվետվության հաստատում:
 3. Բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողովի անցկացման որոշում:
 4. Բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողովի օրակարգի հաստատում:
 5. Բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթվի որոշում:
 6. Բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողովի գումարման մասին բաժնետերերին ծանոթացնելու կարգի որոշում:
 7. Քվեաթերթիկների ձևի և բովանդակության հաստատում:

Օրակարգի թիվ 1 հարցի վերաբերյալ զեկուցեց Ընկերության գլխավոր տնօրեն Է.Գրիգորյանը:

Նախագահը հարցը դրեց քվեարկության:

Քվեարկության արդյունքները՝ կողմ 7, դեմ 0:

Ձեկույցը հաստատվել է :

Օրակարգի թիվ 2 հարցի վերաբերյալ խորհուրդը լսեց գլխավոր հաշվապահ Վ. Խաչատրյանի կողմից ներկայացված ֆինանսական հաշվետվությունը:

Նախագահը հարցը դրեց քվեարկության:

Քվեարկության արդյունքները՝ կողմ 7, դեմ 0:

Ֆինանսական հաշվետվությունը հաստատվել է :

Օրակարգի թիվ 3 հարցի վերաբերյալ խորհուրդը լսեց

Ա.Գրիգորյանին, ժողովը 27.05.10թ. ժամը 15.00 գումարելու առաջարկությամբ:

Նախագահը հարցը դրեց քվեարկության:

Քվեարկության արդյունքները՝ կողմ 7, դեմ 0:

Ժողովի անցկացման օրը որոշվել է:

Օրակարգի թիվ 4 հարցի վերաբերյալ խորհուրդը լսեց

Է.Գրիգորյանին, ժողովի օրակարգում հետևյալ հարցերը հաստատելու առաջարկությամբ՝

1. Ընկերության 2009թ. գործունեության տարեկան հաշվետվության հաստատում:

2. Ընկերության 2009թ. ֆինանսական գործունեությունը ամփոփող տարեկա հաշվետրվության հաստատում:

3. Ընկերության շահույթի և վնասի հաշվետվության հաստատում:

4. Ընկերության վերստուգիչ հանձնաժողովի 2009թ հաշվետրվության հաստատում:

Նախագահը հարցը դրեց քվեարկության:

Քվեարկության արդյունքները՝ կողմ 7, դեմ 0:

Ժողովի օրակարգը որոշվել է:

Օրակարգի թիվ 5 հարցի վերաբերյալ խորհուրդը լսեց

Ա.Գրիգորյանին, Բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու առ 24.05.10թ. առաջարկությամբ:

Նախագահը հարցը դրեց քվեարկության:

Քվեարկության արդյունքները՝ կողմ 7, դեմ 0:

Առաջարկությունը ընդունվել է:

Օրակարգի թիվ 6 հարցի վերաբերյալ խորհուրդը լսեց

Ա.Գրիգորյանի առաջարկը բաժնետերերին ծանուցել ժողովի գումարման մասին «Հայաստանի Հանրապետություն» թերթի միջոցով:

Նախագահը հարցը դրեց քվեարկության:

Քվեարկության արդյունքները՝ կողմ 7, դեմ 0:

Առաջարկությունը ընդունվել է:

Որոշումներ՝

1. Հաստատել Ընկերության 2009թ.գործունեության տարեկան հաշվետվությունը:

2. Հաստատել Ընկերության 2009թ.տարեկան ֆինանսական հաշվետվությունը

3.Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը գումարել 27.05.2010թ. ժամը 15.00:

4.Հաստատել ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի օրակարգը:

5.Բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմել առ 24.05.10թ.:

6. Բաժնետերերին ծանուցել ժողովի գումարման մասին «Հայաստանի Հանրապետություն» թերթի միջոցով:

7. Հաստատել քվեաթերթիկի ձևը:

Տնօրենների խորհրդի անդամների ստորագրությունները`

Նախագահ	Հ. Շիրինյան
Անդամներ	Է. Գրիգորյան
	Ա. Գրիգորյան
	Ս.Հակոբյան
	Հ. Եսայան
	Է.Մաթևոսյան
	Ա.Տարգաշով
Քարտուղար`	Ա.Ներսեսյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 2Ժ- 10

Երևանի ոսկերչական գործարան-1 «ԳՆՈՍՈՆ» Բաց Բաժնետիրական Ընկերության
բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի,

կայացած 2010թ. մայիսի 27-ին, ժամը 15.00

ՍԱՍՆԱԿՑԵՑԻՆ` Ընկերության 1 095 340 տեղաբաշխված բաժնետոմսերի սեփականատերերից թվով ..19.. բաժնետերեր կամ նրանց լիազոր ներկայացուցիչներ (969.608)`այդ թվում Ընկերության 831.218 բաժնեմասի սեփականատեր «Գնոմոն» ՍՊԸ լիազոր ներկայացուցիչ Էմիլ Առաքելյանը:

ՕՐԱԿԱՐԳ` 1.Ընկերության 2009թ.գործունեության տարեկան հաշվետվության հաստատում:

2. Ընկերության 2009թ. ֆինանսական գործունեությունը ամփոփող տարեկան հաշվետվության հաստատում:

3. Ընկերության շահույթի և վնասի հաշվի հաստատում:

4. Ընկերության վերստուգիչ հանձնաժողովի 2009թ հաշվետրվության հաստատում:

5. Ընկերության տնօրենների խորհրդի անդամների ընտրություն:

Ժողովի նախագահ ընտրվեց Ընկերության բաժնետոմսերի նշանակալից սեփականատեր Է. Գրիգորյանը, քարտուղար` Ա. Ներսեսյանը (միաձայն): Միաձայն ընտրվեց նաև

հաշվիչ հանձնաժողովը, բաղկացած էրեք հոգուց՝ Կաֆյան Էլեոնորա, Պողոսյան Յեղիմե, Ներսեսյան Արշալույս:

Ընկերության 2009թ. գործունեության տարեկան հաշվետվությունը բաժնետերերի ուշադրությանը ներկայացրեց գլխավոր տնօրեն Է. ԳՐԻԳՈՐՅԱՆԸ: Ձեկուցողը սպառիչ պատասխաններ տվեց բաժնետերերի կողմից բարձրացված բոլոր հարցերին:

Հաշվետվությունը դրվեց քվեարկության, որի արդյունքներն են՝
կողմ՝ 969.608 դեմ՝ - 0 ձեռնպահ՝ 0

Օրակարգի երկրորդ և երրորդ հարցերի վերաբերյալ զեկուցեց Ընկերության գլխավոր հաշվապահ Վ. Խաչատրյանը: Նշված հարցերի վերաբերյալ վերստուգիչ հանձնաժողովի կողմից հանդես եկավ Լիլիթ Սուքիասյանը:

Ժողովը հաստատեց ներկայացված հաշվետվությունները
կողմ՝ 969.608 դեմ՝ - 0 ձեռնպահ՝ 0

ԵՈԳ -1 «ԳՆՈՍՈՆ» ԲԲԸ 2009թ. գործունեության արդյունքով Ընկերության բաշխման ենթակա շահույթը կազմում է 114.272.0 հազ.դրամ: Դրա 5% -ը ուղղել պարտադիր պահուստավորման ֆոնդին ,63 648.0 հազ.դրամը ուղղել բաժնետերերին շահաբաժին վճարելուն:

Շահաբաժինը վճարել 10 հունիսի 2010թ-ից մինչև 30 օգոստոսի 2010թ., որի վճարը կատարվում է ք.Երևան Արշակունյաց 12 հասցեում Ընկերության դրամարկղից: Մեկ բաժնետոմսին ընկած շահաբաժինը 58.11 դրամ է:

Օրակարգի 4-րդ հարցի շուրջ առաջարկությամբ հանդես եկավ Ա.Գրիգորյանը: Նա նշեց, որ Ընկերության վերստուգիչ հանձնաժողովի անդամները ընտրվել էին 3 տարի ժամկետով 2007թ.: Ուստի ժողովի հաստատմանը պետք է ներկայացվի Ընկերության վերստուգիչ հանձնաժողովի 2009թ. հաշվետվությունը ,որից հետո առաջարկվեն հանձնաժողովի նոր անդամների ընտրություն

Բաց քվեարկությամբ առաջարկը ընդունվեց միաձայն:

Ընկերության վերստուգիչ հանձնաժողովի 2009թ հաշվետվությամբ հանդես եկավ Լիլիթ Սուքիասյանը: Նա նշեց, որ հանձնաժողովը հաստատում է հաշվապահական և ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը:

Ժողովը որոշեց հաստատել վերստուգիչ հանձնաժողովի 2009թ հաշվետվությունը
կողմ՝ 969.608 դեմ՝ - 0 ձեռնպահ՝ 0

Ժողովը հաստատեց հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը:

Օրակարգի 5-րդ հարցի վերաբերյալ ժողովը որոշեց հաստատել նոր ընտիր տնօրենների խորհրդի անդամների կազմը՝

կողմ՝ 969.608 դեմ՝ - 0 ձեռնպահ՝ 0

Ժողովի օրակարգը սպառվեց, և հայտարարվեց նրա փակումը:

- ՈՐՈՇՈՒՄ 1. Ընկերության 2009թ. գործունեության տարեկան հաշվետվությունը հաստատել:
2. Ընկերության 2009թ. ֆինանսական գործունեությունը ամփոփող տարեկան հաշվետվությունը հաստատել:
3. Ընկերության շահույթի և վնասի հաշիվը հաստատել:
4. Հաստատել վերստուգիչ հանձնաժողովի 2009թ հաշվետվությունը:
5. Հաստատել տնօրենների խորհրդի անդամների կազմը:

ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՐ՝

Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ա. ՆԵՐՍԵՍՅԱՆ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 1

Երևանի ոսկերչական գործարան-1 «ԳՆՈՍՈՆ» Բաց Բաժնետիրական Ընկերության
Բաժնետերերի ընդհանուր տարեկան 27.05.10թ. ժողովի կողմից
ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի

Ժողովին մասնակցում էին 19 բաժնետերեր կամ նրանց լիազոր ներկայացուցիչներ,
որոնք բաժնետոմսերի ընդհանուր քանակությունից /1 095 340 հատ / հանդիսանում են
969.608 բաժնետոմսի սեփականատեր, կամ ժողովին ներկա էին 88,52% ձայնի իրավունք
ունեցող բաժնետերեր, ինչն ապահովում է քվորումը:

Հանձնաժողովի անդամներ՝

Է. Կաֆյան

Յ. Պողոսյան

Ա. Ներսիսյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 2

Երևանի ոսկերչական գործարան-1 «ԳՆՈՍՈՆ» Բաց Բաժնետիրական Ընկերության
Բաժնետերերի ընդհանուր տարեկան 27.05.10թ. ժողովի կողմից
ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի

Նախօրոք բաժանված քվեաթերթիկների հաշվառումը ցույց տվեց հետևյալ արդյունք-
ները՝ (առկա 969.608 ձայների քանակից)

1. Ընկերության 2009թ գործունեության տարեկան հաշվետվության հաստատումը՝
կողմ - 969.608 դեմ - 0 ձեռնպահ - 0

Ընկերության գործունեության տարեկան հաշվետվությունը հաստատվեց:

2. Ընկերության 2009 թ. ֆինանսական գործնությունը ամփոփոխ տարեկան հաշվե-
տրվության հաստատումը՝
կողմ - 969.608 դեմ - 0 ձեռնպահ - 0

Ընկերության 2009թ. ֆինանսական գործնության տարեկան հաշվետվությունը
հաստատվեց:

3. Ընկերության շահույթի և վնասի հաշվի հաստատումը՝
կողմ - 969.608 դեմ - 0 ձեռնպահ - 0

Ընկերության շահույթի և վնասի հաշիվը հաստատվեց:

4. Ընկերության վերստուգիչ հանձնաժողովի 2009թ հաշվետվության հաստատումը:
կողմ - 969.608 դեմ - 0 ձեռնպահ - 0

5. Ընկերության տնօրենների խորհրդի անդամների հաստատումը:
կողմ - 969.608 դեմ - 0 ձեռնպահ - 0

Հանձնաժողովի անդամներ՝

Է.Կաֆյան

Հ. Պողոսյան

Ա. Ներսիսյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 3

Երևանի ոսկերչական գործարան-1 «ԳՆՈՄՈՆ» Բաց Բաժնետիրական Ընկերության
Բաժնետերերի ընդհանուր տարեկան 27.05.10թ. ժողովի կողմից
ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի

Ժողովին մասնակցում էին 19 բաժնետերեր կամ նրանց լիազոր ներկայացուցիչներ,
որոնք բաժնետոմսերի ընդհանուր քանակությունից

/ 1 095 340 հատ / հանդիսանում են 969.608 բաժնետոմսի սեփականատեր, կամ
ժողովին ներկա էին 88,52% ձայնի իրավունք ունեցող բաժնետերեր, ինչն ապահովում է
քվորումը:

Նախօրոք բաժանված քվեաթերթիկների հաշվառումը ցույց տվեց, որ օրակարգի
առաջին չորս հարցերը բաժնետերերը հաստատել են միաձայն՝ 969.608 ձայնով: Քանի որ
տնօրենների խորհրդի անդամներն ընտրվում են գումարային /կունուլյատիվ/ ձևով,
բաժնետերերն իրենց ձայները բաշխել են հետևյալ կերպ.՝

Տնօրենների խորհրդի անդամներ՝

1. Հրանտ Շիրինյան	կողմ՝	969.608
2. Արմեն Գրիգորյան	կողմ՝	969.608
3. Էմիլ Գրիգորյան	կողմ՝	969.608
4. Արկադի Տարգաշով	կողմ՝	969.608
5. Սեդա Հակոբյան	կողմ՝	969.608
6. Էդուարդ Մաթևոսյան	կողմ՝	969.608
7. Հովհաննես Եսայան	կողմ՝	969.608

Հանձնաժողովի անդամներ՝

Է.Կաֆյան

Հ. Պողոսյան

Ա. Ներսիսյան

2009թ. գործունեության հաշվետվություն

Ընկերության արտադրության ուղղություններն են՝

- ոսկերչական իրերի պատրաստում և վաճառք,
- թանկարժեք քարերի մշակում և վաճառք,
- ոսկյա ժամացույցների (նաև թանկարժեք քարերով), թանկարժեք և գունավոր մետաղներից մեդալների, հուշամեդալների պատրաստում և վաճառք,
- ոսկերչական արտադրության սարքավորումների հարմարանքների, գործիքների պատրաստում և վաճառք,
- ոչ թանկարժեք մետաղներից (ալյումին) դետալների արտադրություն, փականների արտադրություն:

Ընկերությունը աշխատել է շահույթով: Իրացման ծախսերը կազմել են 38,9 մլն.դրամ , բարձր են եղել վարչական ծախսերը:

Իջել են տարածքների վարձակալությունից եկամուտները ` 2008թ.-49933.0 հազ.դրամ, 2009թ -15759.0 հազ.դրամ

Ունենք դեբիտորական մեծ փաթեթ, որը դժվար է մաշվում:

2009թ.Ընկերության արտադրանքի, ապրանքների և ծառայությունների իրացումից հասույթը կազմել է 1 274 766.0 հազ.դրամ:

2009թ. ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում զուտ շահույթը կազմել է 114 272.0 հազ.դրամ:

Ցանկանում են նշել, որ 2010թ. անհրաժեշտ է ակտիվացնել մասնակցությունը ներքին շուկայում, չնայած ստվերային շուկայի շարունակվող բացասական ազդեցությանը:

Ցանկանում են նշել, որ 2010թ. անհրաժեշտ է ակտիվացնել մասնակցությունը ներքին շուկայում, չնայած ստվերային շուկայի շարունակվող բացասական ազդեցությանը:

Ընկերության արտադրանքի իրացման ծավալների նվազումը հիմնականում պայմանավորված է ոսկու համաշխարհային ճգնաժամով և շուկայում միջին գների անկանոն տատանումներով, իջել են ծավալները ՌԴ-ում և միջինասիական պետություններում:

2009թ. ընթացքում չի աշխատել թանկարժեք քարերի մշակման արտադրամասը, որի հիմնական պատճառը հումքի ձեռք բերման բարդություններն էին և ևս չըջանառու միջոցների պակասությունը:

Պետք է նշել, որ Ընկերությունը այսօր աշխատում է ոչ լրիվ հզորությամբ:

Աշխատանքներ են տարվում հումքի անխափան ձեռք բերման համար:

Անհրաժեշտ բոլոր միջոցառումների կազմակերպման և իրականացման համար գտնում են նպատակահարմար հանձնարարել պ-ն Ա.Գրիգորյանին -մշակել ճգնաժամային միջոցառումների պլան:

- միջոցառումների պլաններում ի նկատի ունենալ կազմակերպչական, ֆինանսատնտեսական միջոցառումներ, ԵՈԳ-1«ԳՆՈՍՈՆ » և ԵՈԳ գործարանների միջև դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հավասարակշռությունը հնարավոր ժամանակամիջոցում վերականգնելու ուղղությամբ:

-ակտիվացնել գործողությունները ներքին շուկայում ծավալները մեծացնելու ուղղությամբ, նպատակ դնելով այդ շրջանառությունը հասցնել ընդհանուր ծավալի (տարեկան վաճառքի)7%.

-ակտիվացնել կապերը ԵՈԳ-ի փորձարարական տեղամասի հետ, նոր իրերի թիրախային մշակման և ներդրման:

Պ-ն Յ.Եսայանին

- ավարտել այլուհիմե արտադրության մասսայական արտադրության կազմակերպման և ներդրման գործընթացը ի նկատի ունենալով նաև ՊՆ-ի պահանջարկը:
 - Պ-ն Է.Գրիգորյանին
 - ներդնել ֆինանսատնտեսական կանխատեսումների ծրագրերի համակարգը:
 - Պ-ն Է.Գրիգորյանին և պ-ն Վ.Խաչատրյանին
 - մշակել տնտեսապես հիմնավորված պարզևատրումների կանոնակարգը:
 - Պ-ն Է.Գրիգորյանին պ-ն Յ.Եսայանին
 - կազմակերպել նոր արտադրությունների իրացում
 - բրենդային իրերի արտադրություն
 - էլ.էրոզիոն դրոշմների արտադրություն
 - 11 մեդալների արտադրություն
 - 3 տեսակի ժամացույցների արտադրություն
 - ադմինիստրատիվ ծախսերի կրճատում
- Նշված միջոցառումների կատարումը կնպաստի ընդերույթյան աշխատանքների բարելավմանը համաշխարհային ճգնաժամի պայմաններում:

Գլխավոր տնօրեն

Է.Գրիգորյան

Ընկերության ֆինանսական վերլուծություն

Նկատի ունենալով 2009թ. Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունը, ուզում եմ Ձեզ ներկայացնել Երևանի Ոսկերչական Գործարան – 1 «Գնոմոն» ԲԲԸ 2009թ. ֆինանսատնտեսական գործունեության որոշ տվյալներ

Ընկերության ընդհանուր ակտիվները հաշվետու տարվա վերջի դրությամբ կազմել է 4545376,0հազ.դրամ, այդ թվում ոչ ընթացիկ ակտիվները 1 602 050,0հազ.դրամ, ընթացիկ ակտիվները՝ 2 943 326,0հազ.դրամ,որոնք կազմում են ընդհանուր ակտիվների համապատասխանաբար 35.25% և 64.75%-ը:

Ընկերության գնումների գծով դեբիտորական պարտավորության հիմնական մասը - 73.16% -ը «Երևանի Ոսկերչական Գործարան» ԲԲԸ-ի նկատմամբ է:

Հատուկ ուշադրություն եմ ուզում հրավիրել,որ Ընկերությունը ունի կրեդիտորական պարտավորություն «Երևանի Ոսկերչական Գործարան» ԲԲԸ,որը չնայած տնտեսական բարդ իրավիճակին նվազել է,ընդ որում «Երևանի Ոսկերչական Գործարան» ԲԲԸ պարտավորությունը կազմում է ընդհանուր պարտավորությունների 63.96% -ը:

2009թ.Ընկերության արտադրանքի,ապրանքների և ծառայությունների իրացումից հասույթը կազմել է 1 274 766.0 հազ.դրամ,որի դիմաց ունեցել ենք 38 921.0 հազ.դրամի իրացման ծախսեր,վարչական ծախսերը կազմել են 83 662.0հազ.դրամ:

2009թ. ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում զուտ շահույթը կազմել է 114 272.0հազ.դրամ:Արտարժույթի վերագնահատումից եկամուտը կազմել է 14151.0 հազ.դրամ

Ոսկու զնի և արտարժույթի մեծ տատանումները զգալի կրճատեց գնորդների կողմից պատվերները:

Ակտիվների շրջանառելիության գործակիցը 0.28 է,իսկ ընթացիկ ակտիվների շրջանառելիության գործակիցը 0.45 է,պատրաստի արտադրանքի շրջանառելիության գործակիցը 1.41:

Անկախության գործակիցը –պասիվների մեջ սեփական կապիտալի մասը 0.45 :

Հիմնական խնդիրը արտաքին շուկայի համալիր ուսումնասիրումը, ապրանքների կայուն իրացման ապահովումը, արտադրության շուկայական կողմնորոշումն է:

Ընկերությունը բյուջեյի, սոցապի նկատմամբ պարտավորությունները կատարում է ժամանակին՝ հաշվարկվել է 121364.8 հազ.դրամ, վճարվել է 121606.9 հազ.դրամի:

Գլխավոր հաշվապահ

Վ.Խաչատրյան

ԵԶՐԱՎԱՑՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ –1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ-ի 2009թ. տարեկան հաշվապահական հաշվեկշռի և ֆինանսական հաշվետվությունների հավաստիության մասին

Զ. ԵՐԵՎԱՆ

« 12 » « ապրիլի » 2010թ.

ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ – 1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ-ի Վերստուգող հանձնաժողովի 25.03.2010թ. նիստի որոշման (արձանագրության թիվ 3) համաձայն ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ – 1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ-ի 2009 թվականի տարեկան հաշվապահական հաշվեկշռում և ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը ճշտելու նպատակով Ընկերության Վերստուգող հանձնաժողովի կողմից իրականացվել է Ընկերության հաշվետվություններում և ֆինանսական փաստաթղթերում բովանդակվող տեղեկությունների հավաստիության ստուգում: Ստուգումը իրականացվել է «Բաժնետիրական ընկերությունների մասին», «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքների, Հայաստանի Հանրապետության օրենսդրական այլ ակտերի, Ե Ո Գ – 1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ-ի Վերստուգող հանձնաժողովի գործունեության կանոնակարգի համապատասխան:

Ստուգումը սկսվել է 2010թ. մարտի 26-ին և ավարտվել ապրիլի 12-ին:

Ստուգմամբ պարզվեց.

ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ – 1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ ստեղծվել է ՀՀ Կառավարության 2000թ. դեկտեմբերի 31-ի թիվ 907 որոշման, ՀՀ Արդյունաբերության և առևտրի նախարարության 16.01.2001թ. թիվ 9 հրամանի համաձայն: Ընկերության գրանցման թիվ՝286.120.01380, գրանցման օրը՝12.06.1995թ., վկայական՝ 01 Ա 013836:

Ընկերությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է՝

Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ օրենսդրական այլ ակտերով և իր կանոնադրությամբ:

Ընկերության գործունեության հիմնական տեսակներն են՝ պերճանքի առարկաների, ոսկերչական իրերի և թանկարժեք զարդեղենի, ժամացույցների, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, կիսաֆաբրիկատների արտադրություն և վաճառք, նոր տեխնոլոգիաների մշակում, ցուցահանդեսների և տոնավաճառների կազմակերպում:

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 1 095 340 000,0 դրամ, որը կազմում է 1 095 340 հատ սովորական անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 1000 դրամ: Բոլոր 1 095 340 բաժնետոմսերը տեղաբաշխված են բաժնետերերի միջև և լրիվ վճարված են նրանց կողմից:

Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը բաժնետերերի ընդհանուր ժողովն է, ընդհանուր ղեկավարումն իրականացնում է տնօրենների խորհուրդը, իսկ գործունեության ղեկավարումն իրականացնում է գլխավոր տնօրենը:

Ընկերության կառուցվածքում հաշվապահությունը գործում է որպես առանձին ստորաբաժանում:

2009 թվականին Ընկերությունը գույքի, պարտավորությունների և տնտեսական գործառնությունների հաշվառումը վարում է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից 2000թ. դեկտեմբերի 29-ի թիվ 319 հրամանով հաստատված կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման հաշվային պլանի, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, ՀՀՀՀՍ և հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական այլ ակտերի համաձայն: Հաշվապահական հաշվառման կազմակերպման համար պատասխանատու է գլխավոր տնօրենը: Ընկերությունում հաշվապահական հաշվառումն իրականացվում է 1C-Ձեռնարկություն հաշվապահական ծրագրով:

Վերստուգող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է ղեկավար մարմինների որոշումների կատարման ընթացքը, ստուգվել են փաստաթղթերի համապատասխանությունը օրենքներին: Արձանագրվել են որոշ թերություններ հաշվապահական հաշվառման և ինքնարժեքի հաշվարկման ձևակերպման մեջ, որոնք ընթացքում ճշտվել են:

Շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցների մնացորդը 01.01.2009թ.-ի դրությամբ կազմել է 508902,0 հազ. դրամ, իսկ 01.01.2010թ.-ի դրությամբ այն կազմել է 439812 հազ. դրամ:

Հողամասեր հաշվի մնացորդը ինչպես 01.01.2009թ.-ի դրությամբ, այնպես էլ 01.01.2010թ.-ի դրությամբ կազմել է 711359,0 հազ. դրամ:

Ընկերությունում պարբերաբար չեն վերանայվել հիմնական միջոցների միավորների օգտակար ծառայության ժամկետները: Հիմնական միջոցների կազմում առկա են զրոյական արժեքներով հիմնական միջոցներ:

Համաձայն Ընկերության 2010թ. հունվարի 15 -ի թիվ 1 հրամանի՝ Ընկերության **գույքագրման** հանձնաժողովի կողմից իրականացվել է հիմնական միջոցների և ապրանքանյութական արժեքների գույքագրում: Գույքագրման աշխատանքները սկսվել է 2010թ. հունվարի 18-ին, ավարտվել է 2010թ. մարտի 18-ին,:

Գույքագրման արդյունքների վերաբերյալ հանձնաժողովի կողմից կազմվել և ներկայացվել են ցուցակներ, որտեղ նշվել են՝ հիմնական միջոցի անվանումը, տիպը, մարկան, գույքային համարը, փաստացի քանակը, վիճակը:

Գույքագրման գործընթացի ուսումնասիրություններից պարզվեց հետևյալը՝

ա/ գույքագրման արդյունքները կազմվել և ներկայացվել են ռուսերեն բլանկների վրա,
բ/ առկա են դեպքեր, երբ մեկ բաժնի հիմնական միջոցները գրանցվել են մեկ այլ բաժնում, որի համար սակայն չկան համապատասխան հաշվառումը հիմնավորող փաստաթղթեր,

գ/ գույքագրման ցուցակներում առանձին դեպքերում բացակայում են գույքահամարները, գրառումներում կան ջնջումներ, կան մատիտով գրառումներ:

Գույքագրման հանձնաժողովի կողմից խախտվել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 2000թ. հունիսի 2-ի «կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների պարտադիր գույքագրման կարգը» հաստատելու մասին թիվ 102 հրամանի պահանջները:

Ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային մնացորդը 01.01.2009թ.-ի դրությամբ կազմել է 23553,0 հազ. դրամ, իսկ 01.01..2010թ.-ի դրությամբ այն կազմել է 16323,0 հազ. դրամ:

Հետաձգված հարկային ակտիվներ հաշվի մնացորդը 01.01.2009թ.-ի դրությամբ կազմել է 1785 հազ. դրամ, 1% նվազագույն շահութահարկի ճշգրտումից հետո հաշվի մնացորդը 01.01..2010թ.-ի դրությամբ կազմում է 6828,0 հազ. դրամ :

01.01.2009թ. դրությամբ Ընկերության դեբիտորական պարտքերը վաճառքների գծով կազմել են 913626,0 հազ դրամ, իսկ 01.01.2010թ. դրությամբ Ընկերության վաճառքների գծով դեբիտորական պարտքերը կազմել են 1170144,0 հազ.դրամ:

Ընկերությունում հիմնադրամներ, ինչպես նաև անհուսալի դեբիտորական պարտքերի դուրս գրման համար պահուստ չի ստեղծվում:

2009թ.-ին Ընկերությունը գործարքները իրականացրել է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ հետ:

Ընկերության գործարքները հիմնականում վճարվում և ստացվում են բանկային փոխանցմամբ, բացառությամբ առհաշիվ անձանց և ընկերության ֆիրմային խանութների միջոցով իրականացվող գործարքների: Հաշվարկային հաշվի մնացորդների ընտրանքային

կարգով կատարված ստուգումից տարբերություններ չեն հայտնաբերվել: Բանկային հաշիվներով դրամական միջոցների հաշվառման գործընթացը բավարարում է ՀՀ գործող օրենսդրության պահանջներին :

01.01.2009թ. դրությամբ գնումների գծով կրեդիտորական պարտքերը կազմել են 2 334 734,0 հազ.դրամ, իսկ 01.01.2010թ. դրությամբ կրեդիտորական պարտքի մնացորդը կազմել է 2 450 856,0 հազ.դրամ:

Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների իրացումից հասույթը կազմել է 1274766,0 հազ.դրամ, գործառնական այլ եկամուտները կազմել են 330101,0 հազ.դրամ, իսկ ինքնարժեքը կազմել է 1050391,0 հազ.դրամ, իսկ գործառնական այլ ծախսերը՝ 277789,0 հազ.դրամ:

2009 թվականին Ե Ո Գ – 1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ-ի շահույթը կազմել է 145240,0 հազ. դրամ: 01.01.2010թ. դրությամբ շահութահարկի գծով ընկերությունը պարտք չունի:

01.01.2010թ. դրությամբ ԱԱՀ-ի գծով ընկերության գերավճարը պետբյուջեին կազմել է 97,4 գերավճարը

01.01.2010թ. դրությամբ եկամտահարկի գծով ընկերության գերավճարը պետբյուջեին կազմում է 4686,0 հազ. դրամ:

01.01.2010թ. դրությամբ գույքահարկի գծով ընկերությունը պետբյուջեի նկատմամբ պարտք ու պահանջ չունի:

01.01.2010թ. դրությամբ հողի հարկի գծով ընկերությունը պարտք ու պահանջ չունի:

01.01.2010թ. դրությամբ սոցապ.հարկի գծով սոցիմնադրամի նկատմամբ ընկերության գերավճարը կազմել է 1232,0 հազ.դրամ:

Ընկերության ֆինանսական կայունության և իրացվելիության վերլուծությունը:

Ֆինանսական կայունության վերլուծություն.

1. Ֆինանսական անկախության գործակից: Այն ցույց է տալիս, թե ընկերության ընդհանուր միջոցների որ մասն է ձևավորվել սեփական կապիտալի հաշվին: Այլ կերպ, այն սեփական կապիտալի տեսակարար կշիռն է կազմակերպության ընդհանուր կապիտալում:

$$Q_1 = \frac{\text{Սեփական կապիտալ}}{\text{Հաշվեկշռի հանրագումար}} = \frac{1931881}{4545376} = 0,42$$

Այս ցուցանիշի ցանկալի փոքրագույն մակարդակը կազմում է 0.5: Այս ցուցանիշի ցածր մակարդակը ցույց է տալիս, որ ընկերությունն իր գործունեությունը մեծապես ֆինանսավորում է կարճաժամկետ կրեդիտորական պարտքերի հաշվին:

2. Պարտավորությունների և սեփական կապիտալի հարաբերակցության գործակից: Այն իր իմաստով մոտ է նախորդ գործակցին և ցույց է տալիս, թե սեփական կապիտալի միավորի հաշվով որքան պարտավորություններ ունի կազմակերպությունը:

$$Q2 = \frac{\text{Պարտավորություններ}}{\text{Սեփական կապիտալ}} = \frac{2613495}{1931881} = 1,35$$

Այս ցուցանիշի ցանկալի փոքրագույն մակարդակը կազմում է 1:

3. Ինքնավարության գործակից: Այն ցույց է տալիս, թե կազմակերպության միջոցների որ մասն է ձևավորվել երկարաժամկետ հիմունքներով ներգրավված աղբյուրների հաշվին:

$$Q3 = \frac{\text{Սեփական կապիտալ} + \text{Երկարաժամկետ պարտավորություններ}}{\text{Հաշվեկշռի հանրագումար}} = \frac{2021184}{4545376} = 0,44$$

Այս գործակիցը ավելի մեղմ է, քան ֆինանսական անկախության գործակիցը, դրա իջեցումը դիտվում է որպես բացասական երևույթ, քանի որ ընկերությունն իր միջոցների ֆինանսավորման համար արդեն սկսել է ներգրավել միջոցներ կարճաժամկետ հիմունքներով:

4. Գործող կապիտալ: Այն ցույց է տալիս, թե ընթացիկ ակտիվների որ մասն է ապահովված սեփական կապիտալով և երկարաժամկետ պարտավորություններով կամ երկարաժամկետ հիմունքներով ներգրավված միջոցների որ մասն է ուղղված ընթացիկ ակտիվների ֆինանսավորմանը:

$$Q4 = \text{Ընթացիկ ակտիվներ} - \text{Կարճ պարտավորություններ} = 2943326 - 2524192 = 419134$$

5. Ընթացիկ ակտիվների` գործող կապիտալով ապահովվածության գործակից: Այն ցույց է տալիս, թե ընկերության ընթացիկ ակտիվների որ մասն է ձևավորվել սեփական կապիտալի և երկարաժամկետ պարտավորությունների հաշվին:

$$Q5 = \frac{\text{Գործող կապիտալ}}{\text{Ընթացիկ ակտիվներ}} = \frac{419134}{2943326} = 0,14$$

Այս ցուցանիշի նորմատիվային փոքրագույն արժեքը կազմում է 0,1:

6. Պաշարների գործող կապիտալով ապահովվածության գործակից: Այն ցույց է տալիս ընկերության ապրանքանյութական պաշարների որ մասն է ձևավորվել սեփական կապիտալի և երկարաժամկետ պարտավորությունների հաշվին:

$$Q6 = \frac{\text{Գործող կապիտալ}}{\text{Պաշարներ}} = \frac{419134}{1601429} = 0,26$$

7. Սեփական կապիտալի մանկրայնության գործակից: Այն ցույց է տալիս, թե ընկերության սեփական կապիտալի հաշվին ձևավորված միջոցների որ մասն է գտնվում շարժունակ (մոբիլ) վիճակում:

$$q_7 = \frac{\text{Գործող կապիտալ}}{\text{Սեփական կապիտալ}} = \frac{419134}{1931881} = 0,22$$

Չափվելիքի իրացվելիությունը բնութագրող ցուցանիշներն են.

1. Ընթացիկ իրացվելիության գործակից: Այն ցույց է տալիս ընկերության կարճաժամկետ պարտավորությունների ընթացիկ ակտիվներով ապահովվածության աստիճանը և որոշվում է ընթացիկ ակտիվների և կարճաժամկետ պարտավորությունների հարաբերությամբ:

$$q_8 = \frac{\text{Ընթացիկ ակտիվներ}}{\text{Կարճաժամկետ պարտավորություններ}} = \frac{2943326}{2524192} = 1,17$$

Այս ցուցանիշի սահմանային նվազագույն արժեքը 2 է:

2. Արագ իրացվելիության գործակից: Այն ցույց է տալիս կարճաժամկետ պարտավորությունների առավել իրացվելի ակտիվներով ապահովվածության աստիճանը և որոշվում է առավել իրացվելի ակտիվների (դրամական միջոցներ, կարճաժամկետ ֆինանսական ներդրումներ, դեբիտորական պարտք) և կարճաժամկետ պարտավորությունների հարաբերությամբ:

$$q_9 = \frac{\text{Արագ իրացվելի ընթացիկ ակտիվներ}}{\text{Կարճաժամկետ պարտավորություններ}} = \frac{1334311}{2524192} = 0,53$$

Այս ցուցանիշի սահմանային փոքրագույն արժեքը 1 է:

Մեր կարծիքով, բացառությամբ ֆինանսական հաշվետվությունների վրա նախորդ մասերում հիշատակված հարցերի ազդեցությունից, ֆինանսական հաշվետվությունները ընկերության ֆինանսական վիճակի՝ առ 1-ը հունվարի 2009թ.-ի դրությամբ, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների ու դրամական հոսքերի մասին տալիս են իրական պատկերը (կամ բոլոր էական առումներով ճիշտ են ներկայացված)՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Հաշվապահական Հաշվառման Ստանդարտների:

Վերստուգող հանձնաժողովը գտնում է, որ ստեղծված իրավիճակից դուրս գալու համար պետք է ուժեղացվի ընկերության ֆինանսական կառավարումը, նշակվի մարքեթինգի քաղաքականության հայեցակարգ, վարվի գնային ճկուն քաղաքականություն, իրականացվի ոսկու կորստի ապահովագրման քաղաքականություն՝ օգտագործելով ֆինանսական անհրաժեշտ գործիքները, նշակվի ծրագիր արտարժույթի փոխարժեքի փոփոխման հետևանքներն ընկերության համար քիչ խոցելի դարձնելու համար, միջոցներ ձեռնարկվի հաստատուն ծախսերը կրճատելու ուղղությամբ:

Վերստուգող հանձնաժողովի

Նախագահ

Լ.. Սուքիասյան

Երևանի ոսկերչական գործարան-1 «ԳՆՈՍՈՆ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

27 մայիսի 2010թ.

1. Ընկերության 2009թ. գործունեության տարեկան հաշվետվության հաստատում:
2. Ընկերության 2009թ. ֆինանսական գործունեությունը ամփոփող տարեկան հաշվետվության հաստատում:
3. Ընկերության շահույթի և վնասի հաշվետվության հաստատում:
4. Ընկերության վերստուգիչ հանձնաժողովի 2009թ հաշվետվության հաստատում:
5. Տնօրենների խորհրդի անդամների հաստատում:

Երևանի ոսկերչական գործարան -1 «ԳՆՈՍՈՆ» Բ Բ Ը

N	Անուն, ազգանուն	Ծննդ. օրվը	Քաղ	Մասնագիտ.	Պաշտոնը	Սով.բաժնե-տոմս. «ԵՈԳ -1» ԲԲԸ
Տնօրենների խորհրդի անդամների թեկնածուներ						
1.	Շիրինյան Հրանտ	1967	ՌԴ	բժիշկ	«Մեզրան» ՍՊԸ տնօրեն	չունի
2.	Գրիգորյան Էմիլ	1938	ՀՀ	ճարտարագետ	Նշանակալից բաժնետեր	110963
3.	Գրիգորյան Արմեն	1965	ՀՀ	ճարտարագետ	«ԵՈԳ -1» ԲԲԸ իրացման գծով տնօրեն	118
4.	Տարգաշով Արկադի	1962	ՀՀ	Պրոֆիլային հղկող բանվոր	պրոֆիլային հղկող բանվոր	Չունի
5.	Հակոբյան Սեդա	1945	ՀՀ	ճարտարագետ		25000
6.	Մաթևոսյան Էդուարդ	1945	ՀՀ	Իրավաբան	Իրավաբան	543
7.	Եսայան Հովհաննես	1981	ՀՀ	ճարտարագետ	Կեխն.գծով տնօրեն	Չունի

Ք Վ Ե Ա Թ Ե Ր Թ Ի Կ

Երևանի ոսկերչական գործարան-1 «ԳՆՈՍՈՆ» Բաց Բաժնետիրական Ընկերություն

27 մայիսի 2010թ.

բաժնետերերի /լիազորված անձի/ անուն, ազգանուն ձայների/բաժնետոմսերի/թիվը

ՀԱՐՑ 1. Երևանի ոսկերչական գործարան-1 «ԳՆՈՍՈՆ» ԲԲԸ տարեկան հաշվետվության հաստատում:
 ԿՈՂՄ ԴԵՄ ՉԵՈՆՊԱՀ

ՀԱՐՑ 2. Երևանի ոսկերչական գործարան-1 «ԳՆՈՍՈՆ» ԲԲԸ 2008 թվականի տարեկան հաշվապահական

հաշվեկշռի հաստատում:
ԿՈՂՄ ԴԵՄ ՁԵՌՆՊԱՅ

ՀԱՐՑ 3. Երևանի ոսկերչական գործարան-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ շահույթի և վճարի հաշվի հաստատում:
ԿՈՂՄ ԴԵՄ ՁԵՌՆՊԱՅ

ՀԱՐՑ 4. Երևանի ոսկերչական գործարան-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ 2009 թվականի գործունեության ֆինանսական արդյունքների աուդիտը իրականացնող անձի որոշումը:
ԿՈՂՄ ԴԵՄ ՁԵՌՆՊԱՅ

ՀԱՐՑ 5. Երևանի ոսկերչական գործարան-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ տնօրենների խորհրդի անդամների ընտրություն հետևյալ կազմով՝
ԳՈՒՄԱՐԱՅԻՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՁԱՅՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ x 5 =

Շիրինյան Հրանտ	ծայն
Գրիգորյան Էմիլ	ծայն
Գրիգորյան Արմեն	ծայն
Հակոբյան Սեդա	ծայն
Տարգաշով Արկաղի	ծայն
Մաթևոսյան Էդուարդ	ծայն
Եսայան Հովհաննես	ծայն

..... ԲԱԺՆԵՏԻՐՈՋ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ա.թ. մայիսի 27 -ին, ժամը 15⁰⁰ ԵՈԳ-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ դահլիճում (Արշակունյաց 12) տեղի կունենա Երևանի ոսկերչական գործարան-1 «ԳՆՈՄՈՆ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը:

- ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝
1. Ընկերության 2009թ. գործունեության տարեկան հաշվետվության հաստատում:
 2. Ընկերության 2009թ. ֆինանսական գործունեությունը ամփոփող տարեկան հաշվետվության հաստատում:
 3. Ընկերության շահույթի և վճարի հաշվի հաստատում:
 4. Ընկերության վերստուգող հանձնաժողովի 2009թ. հաշվետվության հաստատում:
 5. Տնօրենների խորհուրդի անդամների ընտրություն:

Հասցե՝ Արշակունյաց 12
Հեռախոս 52-53-21

Ընկերության տնօրենների խորհուրդ